Արմավիրի Մ. Սիլկիյանի անվ. N6 հիմն. դպրոց

2023-2024 ուստարի

Հաշվետվություն

Նախագծային աշխատանքից

Առարկա՝ Անգլերեն

Թեմա՝ Անտառահատում

Ուսուցիչ՝ Փ. Գևորգյան

Ժամկետ՝ 02-10-10.11

Մ. Սիլիկյանի անվան N6 հիմն. դպրոցում անցկացվեց նախագծային աշխատանք <<Անտառահատում>> թեմայով։

Նախագծային աշխատանքի նպատակն է՝

- զարգացնել գիտելիքը շրջակա միջավայրի առկա խնդիրների, անտառների դերի կարևորության և դրանց վերացման վտանգների մասին։
- Ընդլայնել բնության պահպանման և անտառահատման կանխման միջոցների հետաքրքրության շրջանակը։
- Ձևավորել վերաբերմունք դեպի բնության, անտառների, բույսերի նշանակությանը։
- Նպաստել խնդրին ևս մեկ անգամ անդրադառնալու և պրոպագանդելու հնարավորությանը, ինչպես նաև աշակերտների կողմից առաջարկված լուծումների տարբերակների քննարկմանը, մշակմանը և իրագործմանը։

Նախագծային աշխատանքի առանցքային խնդիրն է՝ ուսումնասիրել անտառների դերը բնության մեջ, անտառների սակավեցման պատճառները և հետևանքները

Նախագծային աշխատանքի ավարտին աշակերտները կկարողանան՝

- սովորել անտառների կարևորության, դերի և նշանակության կարևորության մասին, ինչպես նաև սահմանել «Անտառահատում» տերմինը ։
- Ընկալել խնդրի լրջության մակարդակը, կիրառել ստացված գիտելիքը շրջապատում սթափեցնող կոչ անելու նպատակով վերլուծել անտառահատման պատճառները,
- Գնահատել անտառահատման խնդրի լուծումների կարևորության աստիճանները վերլուծելով անտառահատումների տեմպերը էկոլոգիապես կարևոր տարբեր տարածքներում։

Նախագծին մասնակցում էին 10 աշակերտ՝

Միլենա Սարգսյան , Վիգեն Վարդանյան, Հայկ Աֆրիկյան, Օլյա Ասատրյան, Մարիա Շադյան, Էրիկ Պետրոսյան, Լիլիթ Մանուկյան, Մելանյա Կարապետյան, Անի Կակոյան, Անի Կոստանյան:

ՈՒսումնական նախագծային աշխատանքն իրականացվել է 5 շաբաթ տևողությամբ՝ հետևյալ հաջորդականությամբ

1-ին օր-04.10.23թ. Նախագծային աշխատանքի ձևի, բովանդակության, կայանալիք աշխատանքների ներկայացում , թեմայի ընտրություն:

2-րդ օր-11.10.23թ. Թեմայի վերաբերյալ տեսանյութերի ուսումնասիրություն, քննարկում անտառահատման ծագման և հետևանքների մասին: Հավաքագրված տեղեկության խմբավորում:

3-րդ օր-18.10.23թ. Անտառահատման խնդրի ընդհանուր վերլուծություն:

Խնդրի նվազեցման լուծումների առաջարկությունների քննարկում: Հայաստանի փայտաարդյունաբերության և անտառների պահպանության նպատակով ձեռնարկվող քայլերի մասին տեղեկության հավաքագրում:

4-րդ օր-01.11.23թ. Ծառատունկ, տեսասահիկի պատրաստում :

5-րդ օր-08.11.23թ. Կատարած աշխատանքների ներկայացում:

Նախագծային աշխատանքի ողջ ընթացքում աշակերտները աշխատում էին մեծ ոգևորությամբ: Նրանք տարբեր աղբյուրներից օգտվելով հավաքագրում էին տեղեկություն և պատրաստում տեսասահիկներ: Աշակերտները պատրաստել էին նաև էսքիզ, որտեղ նկարագրվում էին երկու հակասական պատկերներ՝ անտառածածկ և անտառահատված տարածքներ:

Աշխատանքի ընթացքում կազմակերպվեց ծառատունկ դպրոցի բակում, որը պրոպագանդում է տնկել շատ ծառեր և ձևավորում վերաբերմունք բնության և բույսերի նկատմամբ:

Նախագծային աշխատանքի կատարման ավարտին աշակերտների մոտ ձևավորվեցին հետևյալ **կարողունակությունները՝**

- ✓ Ինքնաճանաչողական,սոցիալական կարողունակություն
- ✓ Մեդիա կարողունակություն
- ✓ Սովորել սովորելու կարողունակություն

Նախագծի վերջնարդյունքները՝

Աշակերտները կարողանում են՝

- ուսումնասիրել և ընդլայնել սեփական ուսումնառության և փորձառության հնարավորությունները՝ դրսևորելով շարունակական ինքնազարգացման վարքագիծ.
- տարբեր աղբյուրներից դուրս բերել հետազոտական թեմային առնչվող նյութեր
- ճանաչել և հոգատար վերաբերմունք ցուցաբերել իրենց բնակավայրի և համայնքի բնության նկատմամբ
- դրսևորել համագործակցային կարգավորման հմտություններ
- վերլուծել և համեմատել աշխարհի անտառահատման արդյունքում առկա խնդիրները իրենց երկրի, քաղաքի խնդիրների հետ:
- կարծիք արտահայտել խնդրի վերաբերյալ և ունենալ հստակ դիրքորոշում բնապահպանական խնդիրների բարձրացման և քննարկման ընթացքում
- Կիրառել ձեռք բերված գիտելիքը՝ կատարելով կանխարգելիչ միջոցառումներ

Գնահատման չափանիշներ՝

Համապատասխանությունը թեմային, ամբողջականությունը, գիտական հիմնավորվածությունը, գրագիտությունը	1. Բովանդակությունը ամբողջովին համապատասխանում է թեմային: *(3 միավոր)* 2. Աշխատանքը ամբողջական է: Առկա են ոչ էական թերություններ: *(3 միավոր)*

	3. Սկզբնաղբյուրի ուսումնասիրությունը ամբողջական է: *(1 միավոր)* 4. Կատարված աշխատանքի ճիշտ և մանրամասն ներկայացում: */ 1 միավոր/*
/ Ձևը/միջոցը խոսքը, համագործակցությունը/ ինքնուրույնությունը	1. Աշխատանքի ներկայացման ձևը/միջոցն ամբողջովին արտացոլում է թեմայի բովանդակությունը: *(1միավոր)* 2. Խոսքը գրագետ է, տրամաբանված *: (1միավոր)*

Աշակերտները գնահատվեցին ընթացիկ ձևավորող գնահատականով, իսկ նախագծային աշխատանքի ավարտին՝ միավորային գնահատմամբ:

Միլենա Սարգսյան	9
Վիգեն Վարդանյան	9
Հայկ Աֆրիկյան	9
Օլյա Ասատրյան	9
Մարիա Շադյան	9
Էրիկ Պետրոսյան	9
Լիլիթ Մանուկյան	9
Մելանյա Կարապետյան	9
Անի Կակոյան	9
Անի Կոստանյան	9